# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **5-6**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

## *3 միավոր գնահատվող առաջադրանքներ*

**1.** Ի՞նչ ենք անվանում նկարում պատկերված կենդանու ձագին:



*Ա.* արծվիկ  *Բ.* զամբիկ  *Գ.* կորյուն  *Դ.* մտրուկ  *Ե.* քոթոթ

**2.** Կենդանիների և բանջարեղենի տեսակների սկզբնատառերը համապատասխան վանդակներում տեղադրելուց հետո ի՞նչ աշխարհագրական օբյեկտի անվանում կգտնես:



*Ա.* ծովի  *Բ.* լճի  *Գ.* քաղաքի  *Դ.* անապատի  *Ե.* գետի

**3.** Ամեն քայլում փոխելով մեկ տառ՝ ամենաքիչը քանի՞ միջանկյալ բառով (քայլով) կարելի է ***հին***-ը դարձնել ***նոր***:

*Ա.* 1  *Բ.* 2  *Գ.* 3  *Դ.* 4  *Ե.* 5

**4.** Ո՞ր չորստառանի բառն է, որ թե՛ մեծերը, թե՛ փոքրերը գրում են սխալ:

*Ա.* հորդ  *Բ.* բարդ  *Գ.* գդալ  *Դ.* սխալ  *Ե.* դդում

**5.** Ո՞ր բառն է գաղտնագրված նկարելուկում:




*Ա.* թագադրում  *Բ.* թագավորանիստ  *Գ.* գեղատեսիլ
*Դ.* գեղադալար  *Ե.* գթասիրտ

**6.** Արայի ո՞ր գործողությունից «կխռովենք»:

*Ա.* Արան օգնում է ընկերոջը:  *Բ.* Արան նկարում է վրձինով:
*Գ.* Արան համբուրում է քույրիկին:  *Դ.* Արան գիրք է կարդում:
*Ե.* Արան պահմտոցի է խաղում:

**7.** Եթե պատասխանի տարբերակներում տրված զույգերի բառերը ճիշտ տեղադրեք առած-ասացվածքներում, ո՞ր զույգը դուրս կմնա:

*1._________ հետ քար քաշիր, ___________ հետ փլավ մի՛ ուտիր:*
*2. Թոկի ___________ է լավը, խոսքի՝ ___________:*
*3. __________ խոսիր, _________ լսիր:*
*4. _________ փողը ___________ օրվա համար է:*

*Ա.* բարակ-հաստ  *Բ.* շատ-քիչ  *Գ.* սև-սպիտակ
*Դ.* երկար-կարճ  *Ե.* անգետ-գիտուն

**8.** Երեք եղբայր են.
Մեկն ուտում է՝ չի կշտանում,
Մեկը պառկած՝ վեր չի նայում,
Մեկը գնում է, հետ չի նայում: *(Ժողովրդական հանելուկ)*

*Ա.* ջուր, գոլորշի, ամպ  *Բ.* կրակ, մոխիր, ծուխ
*Գ.* կայծակ, ամպ, անձրև  *Դ.* Շատակեր Շաքան, ծույլ մարդը, Զախորդ Փանոսը
*Ե.* թագավորի երեք տղաները

**9.** Տարբերակներում բերված գումարներից որո՞նք են շնչավոր:

1. մեծ +  =
2.  + շղթա =
3.  + որս =
4. գիս +  =
5.  + սեր =

*Ա.* 2, 4, 5  *Բ.* 3, 4, 5  *Գ.* 1, 3, 4  *Դ.* 3, 4, 5  *Ե.* 1, 3, 5

**10.** ***Անասնաբույժ, զինում, համալուծ, կույս, հալածում, աղաման, բաժանայուն*** բառերի շարքում ջնջի՛ր մեկ անգամից ավելի հանդիպող տառերը: Մնացած տառերով ի՞նչ բառ է կազմվում:

*Ա.* աղբյուր  *Բ.* լույս  *Գ.* արկղ  *Դ.* կղզի  *Ե.* կաղին

## *4 միավոր գնահատվող առաջադրանքներ*

**11.** Բերված բառերից որի՞ն ավելացնելով ***ակ, իկ, ուկ*** մասնիկները՝ կստանանք տարբեր իմաստներով երեք նոր բառ:

*Ա.* գետ  *Բ.* գայլ  *Գ.* հարթ  *Դ.* մարդ  *Ե.* հատ

**12.** Ո՞ր տարբերակում տառերը ճիշտ հերթականությամբ դասավորելու և անհրաժեշտ միջակայքերը պահպանելու դեպքում չես ստանա Թումանյանի հեքիաթի վերնագիր:

*Ա.* չտառողեպըավս  *Բ.* վլրթիունիխ  *Գ.* տըսուՆնաաա
*Դ.* անկըրդերենա  *Ե.* հորանըաթքաղ

**13.** Տրված բոլոր բառերը, բացի մեկից, և՛ աջլիկ են, և՛ ձախլիկ: Ո՞րն է միայն աջլիկ:

*Ա.* տղա  *Բ.* մարդ  *Գ.* հարս  *Դ.* փեսա  *Ե.* շուն

**14.** Բառերից մեկը չի ենթարկվում մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր բառն է դա:

*Ա.* թռնիր  *Բ.* զամբյուղ  *Գ.* գիրք  *Դ.* ջեռոց  *Ե.* սեղմակ

Վերահրատարակումն միայն «Այբ»-ի համաձայնությամբ

15. *Ընդամենը կար մի րոպե՝ լարի ճիշտ գույնն ընտրելու համար:* Ո՞ր գույնն ընտրեց ռումբը վնասազերծողը: Պատասխանը կա պայմանի մեջ:

*Ա.* կապույտ  *Բ.* կանաչ  *Գ.* սպիտակ  *Դ.* կարմիր  *Ե.* դեղին

16. Ո՞ր կենդանու ձագն է թաքնված ստվերանշված վանդակներում:



*Ա.* փոկ  *Բ.* հորթ  *Գ.* բադ  *Դ.* գառ  *Ե.* կով

17. Քանի՞ բառում է մ-ն «տանտեր»:
*սուսա-բար, ա-բարիշտ, զա-բյուղ, ա-բիծ, ա-բարտավան, ա-բիոն, ճա-պրուկ, ա-բարձիչ*

*Ա.* երեք  *Բ.* չորս  *Գ.* հինգ  *Դ.* վեց  *Ե.* յոթ

18. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

ՀՈՐԹ
\+
ՇՆՈՐՀ
ՏԵՏՐԱԿ

| | *Ա.* | *Բ.* | *Գ.* | *Դ.* | *Ե.* |
|---|---|---|---|---|---|
| | 4625 | 3625 | 3625 | 5625 | 5462 |
| + | 97623 | 87623 | 97623 | 97623 | 97623 |
| | 112248 | 91248 | 101248 | 103248 | 103095 |

19. *Օրընդմեջ, հնամենի, դարակազմիկ, ժամանակավրեպ,*  : Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

*Ա.* տարեցտարի  *Բ.* տարակարծիք  *Գ.* տարկետում
*Դ.* տարիանում  *Ե.* միատարր

20. Մեսրոպն ունի տասներկու խորանարդիկ, որոնցից յուրաքանչյուրի բոլոր նիստերի վրա գրված է մեկական տառ: Այդ տառերն են՝ *գ, ի, ռ, ծ, ա, ր, յ, ֆ, օ, տ, զ, ե:* Մեսրոպը քանի՞ խորանարդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

*Ա.* 5  *Բ.* 6  *Գ.* 7  *Դ.* 8  *Ե.* 9

### *5 միավոր գնահատվող առաջադրանքներ*

21. Ո՞ր տառերը տեղադրենք բաց թողնված տեղերում, որ կազմվի բառ (տե՛ս նկարը):




*Ա.* բ, կ  *Բ.* ճ, գ  *Գ.* ու, ն  *Դ.* օ, կ  *Ե.* զ, խ

22. ***«Երկաթը տաք-տաք են ծեծում»*** առածը նշանակում է՝

*Ա.* որ պետք լինի, երկաթն էլ կծեծեն.
*Բ.* տաք-տաք խոսողը երկաթ չի ծեծի.
*Գ.* ամեն բան որոշվում է վերևում.
*Դ.* ամեն բան ժամանակին պետք է կատարվի.
*Ե.* տաք երկաթը սառը երկաթով են ծեծում:

23. ***Կոշիկ, կոպեկ, կատիկ, կորեկ, կապիկ, կռիակ, կապուկ*** բառերից վեցն ինչ-որ օրինաչափությամբ կապված են իրար: Ո՞ր բառն այդ օրինաչափությանը չի համապատասխանում:

*Ա.* կոպեկ  *Բ.* կռիակ  *Գ.* կապիկ  *Դ.* կատիկ  *Ե.* կորեկ

24. *Եվ մեղուները ոսկե, և մեղուները զեղուն*
*Հեռանում են՝ քաղցրության բեռն ու պաշարը կապած,*
*Ու վարվում է դեղձենին այգաբացի լույսերում՝*
*Իբրև փոքրիկ այգաբաց:*

Ո՞ր բառն իր հոմանիշը չունի բերված քառատողում:

*Ա.* լի  *Բ.* ինչպես  *Գ.* կայծկլտալ  *Դ.* մեկնել  *Ե.* վերջալույս

25. Մի գոմ ունեմ՝ հազար ոչխար է մտնում, մի քիչ բուրդ չի մտնում: (*Ժողովրդական հանելուկ*)

*Ա.* ծիծեռնակի բույն  *Բ.* խլուրդի բույն  *Գ.* ամառային գոմ
*Դ.* մրջնանոց  *Ե.* ախոռ

26. Բերված անուններից չորսն ունի մի հետաքրքիր հատկություն: Ո՞րն է զուրկ այդ հատկությունից:

*Ա.* Տրդատ  *Բ.* Ալիս  *Գ.* Աննա  *Դ.* Սիրաս  *Ե.* Գևորգ

27. Գնդիկների վրա գրված էին ***հաղթել, ճեպընթաց, զղչալ, միջն, որևիցէ, ինչևէ, ութանասուն, տասներեքերորդ, երկորյակ, բացօթյա, համբույր, խոնարվել, ակնթարթ, ճանապարհորդել*** բառերը: Աշակերտները ճիշտ ուղղագրությամբ բառերով գնդիկները հավաքեցին ծղոտե զամբյուղում, սխալ ուղղագրությամբ բառերով գնդիկները՝ փայտե արկղում: Քանի՞ գնդիկ հավաքվեց փայտե արկղում:

*Ա.* 6  *Բ.* 8  *Գ.* 5  *Դ.* 7  *Ե.* 4

28. Ի՞նչ բառ պետք է գրվի մեղվիկի փոխարեն:

***բուրդ, դդում, միրգ, գիրք, բսալ,*** 

*Ա.* ցանկ  *Բ.* կարճ  *Գ.* կարթ  *Դ.* սունկ  *Ե.* կեչի

29. Հայերենի յուրաքանչյուր տառ ունի նաև թվային արժեք (Ա=1, Ժ=10, Շ=500, Փ=8000): Հետևյալ բառերից որի՞ տառերի թվային արժեքների գումարն է ամենափոքրը:

*Ա.* զանգ  *Բ.* աշուն  *Գ.* գրավ  *Դ.* նմուշ  *Ե.* վագր

30. Ի՞նչ արտահայտություն է պատկերված նկարելուկով:

ՋՐ
Մ
ԱՌ

*Ա.* ջրիմուռի առու
*Բ.* մարջանի տակառ
*Գ.* ջրի տակ՝ մի տակառ
*Դ.* ջրի տակ մամուռ
*Ե.* ջրի մամուռ